ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Ղուրսալի համայնք,
հասցե Լոռու մարզ գ. Ղուրսալի
Հեռախոս (+374 93) 58-62-76
էլ. փոստ ghursali.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » հունվարի 2020 թվականի թիվ 01

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով

Ղուրսալի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի 2019 - 2023թթ – ի հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ղուրսալ համայնքի ավագանու 2016 թ-ի դեկտեմբերի 15-ի «Ղուրսալի համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» թիվ 33 որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱԶՐՅԱՆ Ա. Ծ.			
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Վ. Կ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ.Հ.Ռ.			
ՄԻՆԱՍՅԱՆ Դ. Մ.			
ՄԻՐԶՈՅԱՆ Ս.Ռ.			

ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ղուսալ համայնքի
ավագանու 15.01.2020թ. թիվ 01 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՂՈՒՐՍԱԼ

2020Թ

Ղուրսալի համայնքի ղեկավար՝ Միհեր Մինասյան

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

«Ղուրսալ համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

ı խնդիր, որի միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում						
ամիջական	Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2019	2020	2021	2022	2023
		80	90	95	100	105	110
ջանկյալ ր	1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային ճանապարհներ						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2019	2020	2021	2022	2023
		0	2	0	0	0	0
	2. Բարելավված հասարակական տրանսպորտ						
	Ցուցանիշներ երթուղի	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2019	2019	2020	2021	2022	2023
		0	0	0	0	0	0
մնական ունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում 1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների կառուցում 1.3 Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն ավելացում						
ուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 2 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 մլն դրամ						
ականացման ıրաժեշտ այլ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
մնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները						
մնական ը	Ղուրսալ համայնքի բնակչությունը						
իզբ և ավարտ	Սկիզբ՝ 2019թ.- Ավարտ՝ 2023թ.						
ամառոտ թյուն	Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն և մասամբ բացակայում է փողոցային լուսավորությունը: Համայնքի 70 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

«Ղուրսալ համայնքի ջրագծի կառուցում»

(Ծրագրի անվանում)

ı խնդիր, որի միտված ծրագիրը	Ղուրսալ համայնքում կազմակերպել ջրագծի կառուցում						
ամիջական	Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովում						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	202
		90	90	90	100	110	115
ջանկյալ ր	1. Կառուցված խմելու ջրի գործող ջրագիծ						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	3	0	0	0	0
	2. Կանոնակարգված ջրի բաշխում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2018	2019	2020	2021	2022	2023
		0	3	6	9	12	12
մնական ունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով: 1.3.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ: 1.4. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:						
ուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 2 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 մլն դրամ						
ականացման ıրաժեշտ այլ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
մնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
մնական ողը	Ղուրսալ համայնքի ողջ բնակչությունը						
իզբ և ավարտ	Սկիզբ՝ 2019թ.- Ավարտ՝ 2023թ.						
ամառոտ թյուն	Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 05%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:						

Բովանդակություն

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները .....

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

4. ՀՀՀԶԾ ֆինանսավորում

5. ՀՀՀԶԾ մոնիթորինգ

1. **Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք**

Սիրով ողջունում եմ Ղուրսալ համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Ղուրսալ համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով , այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ ,որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականցնել մեր առջև դրված խնդիրները , համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործընթացներին:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- *Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը*
- *Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը*
- *Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը*
- *Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.*
- *Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը*
- *Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները*
- *Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը*
- *Նոր աշխատատեղերի ստեղծում*
- *Համայնքում տուրզմի զարգացումը*

➢ ***Համայնքում առկա հիմնախնդիրները***

- *Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /70%-75%/*
- *Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղգործիքների բացակայություն*
- *Փոքր հողակտորների և ոչ ճիշտ օգտագործման արդյունքում ուժասպառված հողերը*
- *Ոռոգման ջրի բացակայություն:*
- *Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության / նոր ջրագծի կառուցում/*
- *Արուտավայրերի ճանապարհների անմխիթար վիճակ,բացակայություն-*
- *Աշխատատեղերի բացակայություն*
- *ԳԵՆ պլանի բացակայություն*
- *մշակույթի տան բացակայություն*
- *մանկապարտեզի շենքի բացակայություն*
- *Ներհամայնքային ճանապարհներ և գիշերային լուսավորության կառուցում*

➢ ***Լուծման ուղիները***

- *Օրենքների փոփոխություններ*
- *Լրացուցիչ ֆինանասական միջոցների ներկրում*
- *Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում*
- *Աշխատատեղերի ստեղծում*
- *Իրավագիտական ծառայությունների մատուցում*
- *Գովազդ*
- *Հանարային մասնակցություն*
- *Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ*

- *Համագործակցություն փոքր և միջին ձեռնարկությունների, օտարերկրյա ներդրողների, միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ*

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ օրենսդրական ակտերով:

Այն մշակվում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի, ավագանու, բնակչության, հանձնաժողովների և ՀԿ -ների կողմից արված առաջարկությունների և քննարկումների հիման վրա, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Համայնքը վերաբնակեցվել է 20-րդ դարի վերջին (1988թ.) հարևան Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներով (փախստականներով): Ղուրսալի համայնքը գտնվում է Վանաձոր քաղաքից 17 կմ և Սպիտակ քաղաքից 7կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից 110կմ հեռավորության վրա: Համայնքի վարչական տարածքով են անցնում երկաթգիծը, Փամբակ գետը, Երևան-Վանաձոր -Թբիլիսի մայրուղին : Գյուղի ռելեֆը լեռնային է, կլիման բարեխառն:

➢

Համայնքի հողատարածքը

	ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի համայնքի հիմնական հողային ռեսուսները	հա
1.	*Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝*	2281,53
2.	*Բնակավայրի հողեր*	60,0
3.	*Գյուղատնտեսական նշանակության հողեր*	1378,59
4.	*Անտառային հողեր*	676,24
5.	*Արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր*	35,06
6.	*Ջրային հողեր*	7,47

1.2.ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի բնակչությունը կազմում է 559 մարդ, որոնցից՝
Կանայք—259
Տղամարդիկ—300
Այդ թվում ժամանակավոր կացարաններում (վագոն տնակներում)-152
2. Բնակչության տարիքային կազմը՝
0-6 տարեկան- 24
7-17 տարեկան- 57
18-62 տարեկան -344
63-ից բարձր -84
3. Բնակչության սոցիալական կազմը
Թոշակառուներ -136
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 3
Հաշվանդամներ- 30 (որից մանկահասակ 2)
Աշխատունակներ- 370
Սոցիալական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ 54

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Նկարագրել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակն, անդրադառնալով հետևյալ հարցերին.

- *Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն- 14281.4*
- *ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը -25(%),*
- *Համայնքի տարածքում առկա են հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները՝*
  Քարի վերամշակման արտադրամաս -1 - գործող
  Ձկնաբուծարան 1 որից՝ գործող -0
- *Համայնքի տարածքում ծառայությունների բնագավառի ձեռնարկութուններն են՝*
  Խանութներ-1 զբաղված են առևտրով
  Հասարակական սննդի կետեր՝-2, որից՝ գործող 2-ը
  Համայնքը համարվում է գյուղատնտեսական՝
  Դաշտավարություն
  Անասնապահություն
  Արտադրվող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են՝ միս, ցորեն, գարի, , բանջարաբոստանային կուլտուրաներ, պտուղ-հատապտուղ

անվանում	*հեկտար*	*Արտադրանքի ցենտներ*	*Իրացման շուկա*
Ցորեն	*15*	*225*	*Վանաձոր*
Գարի	*12*	*144*	*Վանաձոր*
Բանջ.բոստ. կուլտուրաներ	*5*	*80*	*Վանաձոր*

Պրուղ-հատապտուղ	13,05	80	Վանաձոր
Կերային կուլտուրաներ	26,3	230	Վանաձոր

Անասնապահություն. Արտադրվող հիմնական մթերքներն են՝ կաթ, միս,

անվանում	Կգ/լ	Իրացման շուկա
Կաթ	136.000	Վանաձոր
Միս	20.000	Վանաձոր

- Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական հուշարձաններից է Ղուրսալ համայնքի Սբ.Գևորգ եկեղեցին, որը տարածաշրջանի ամենահին եկեղեցին է՝ կառուցված է 6-րդ դարի կեսին և վերականգնվել է 2001թ. – ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով անհայտ բարերարի ներդրած գումարների հաշվին, ունի բարեկարգ տեսք:
- Համայնքում գործում է հիմնական դպրոց
  աշակերտների թիվը 42
  Աշխատողների թիվը 25
  Դպրոցը ունի հատակի, պատուհանների,կոսմետիկ վերանորոգման կարիք
- Համայնքում գործում է բուժ. Կետ, որին հատկացվել է դպրոցում մեկ սենյակ:
- Ընտանեական նպաստի համակարգում ընդգրկված են 54 ընտանիքներ:
- գործազրկության մակարդակը 75%:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից 2019 թվականին կառուցվել է ՓՄՁ(փոքր և միջին բիզնես կենտրոն, որի մեջ ներգրավված է տուրիզմի զարգացումը), ճանապարհների բարեկարգում, ներհամայնքային փողոցների լուսավորում:

2.4Համայնքի ֆնանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանասական կանխատեսումները

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2019	2020	2021	2022	2023
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	3.086.2	3.306.2	3.306:2	3.306.2	3.306.2
1.	Հողի հարկ	1.037.3	1.037.3	1.037.3	1.037.3	1.037.3
2.	Գույքահարկ	1109.0	1109.0	1109.0	540.0	540.0
3.	Վարձավճար	709.9	709.7	709.7	709.7	709.7
4.	Տեղ. տուրք	230.0	450.0	450.0	450.0	450.0

7.	Դոտացիա	9.489.4	10.720.0	10.720.0	10.720.0	10.720.0
Բ.	ԾԱԽՍԵՐ	11896.2	11896.2	11896.2	11896.2	11896.2
1.	Կառավ. ապարատ.ծախսեր	11581.0	11262.0.0	11262.0.0	11262.0.0	11262.0.0
2.	Կրթություն	100.0	150.0	150.0	150.0	150.0
3.	Տրանսպորտային կապ	400.0	250.0	250.0	250.0	250.0
4	Բնակ.շինություն	577.0	711.0	711.0	711.0	711.0
5.	Սոցիալական պաշտպան..	125.0	100.0	100.0	100.0	100.0
6.	Այլ խմբեր /պահուստային/	277.4	730.0	730.0	730.0	730.0

2.1.5.Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

Այս ենթաբաժնում մանրամասն պետք է նկարագրվեն համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարությունները: Պետք է դիտարկվեն զարգացման առնվազն հետևյալ ուղղություններում առկա դժվարությունները.

Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչնդոտող գործոններն են ֆինանսի բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները,երթուղային տրանսպորտի բացակայությունը, գիտելիքների պակասը:

1) համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի խոչնդոտը գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը , ֆինանսի պակասը , բնակչության մոտ գիտելիքների պակասը:

2) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման խոչնդոտներից են՝ Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների բացակայությունը:

3) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

4) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչնդոտ է աշխատատեղերի բացակայությունը, սեզոնային զբաղվածության արտադրամասերի բացակայությունը, սոցիալական օգնության ֆինանսի սակավությունը , լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը :

5) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

6) համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչնդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

7) Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը:

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը այս բնագավառում՝ ներհամայնքային տրանսպորտի ներդնումը տնտեսապես ձեռնտու չէ,իսկ ճանապարհների և ենթակառույցներ պահպանման և ժահագործման առումով կան որոշակի ֆինանսական դժվարություններ:

9) Պետության պաշտպանության իրականացման աջակցումը,այս խնդրի լուծման համար կարևոր խոչնդոտ է հայրենասիրական, պետական մտածողության պակասը, համայնքաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

10) Գյուղատնտեսության զարգացման խթանումը,-կարևոր խոչդոտ է ոռոգման ջրագծի և ջրի որոշակի բացակայությունը, գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, արոտներներում ջրի, մակատեղերի, ծածկոցների և ճանապարհների բացակայությունը:

11) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչնդոտ է գիտակցական մակարդակի ոչ բարվոք վիճակը:

12) Զբոսաշրջության զարգացման խթանման խոչնդոտ է, այդ բնագավառում բնակչության գիտելիքների պակասը, հանգստյան գոտիների և գյուղական փոքր հյուրանոցների կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը :

13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում, այս խնդրի լուծման դժվարությունները կապված են սոցիալական վատ վիճակի և աշխատատեղերի բացակայության հետ:

14) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման խոչնդոտներից են բնակչության սոցիալական ծանր վիճակը, աշխատատեղերի բացակայությունը, բազմանդամ ընտանիքների հանդեպ հոգածության ցածր մակարդակը, բնակչության մոտ կա մտահոգություն երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովելու հարցում, բնակչության արտագաղթը:

15) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը, այս խնդրի իրականացման խոչնդոտ է դեղորայքի և բժշկական սարքավորումների բացակայությունը, մասնագետների և սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր- հնարավորությունները, առողջության պահպանման համալիր ծրագրի բացակայությունը:

16) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

17) համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, կապված է սոցիալական վատ վիճակի և գիտելիքների անհրաժեշտ պաշարի բացակայության հետ :

18) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով, այս խնդրի լուծման դժվարությունները կապված են իրազեկման, հայրենասիրական ոգու պրոպագանդման, արտերկրներում բնակվող մեր հայրենակիցների հետ մշտական կապի բացակայության, նրանց համայնքային կյանքին ծանոթացնելու և մասնակից դարձնեու խնդրի հետ , ինչպես նաև բարեգործությունների լայն լուսաբանման բացակայության հետ:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1.Գյուղի աշխարհագրական դիրքը / միջպետական մայրուղու մոտ գտնվելը/

2.Գազաֆիկացված է մոտ 30%-ով

3.Հասանելի է բջջային կապի 2 օպերատորները

4.Բնակավայրի մեծ մասում ինքնահոս խմելու ջրի առկայություն

5.Հասարակական սննդի օբյեկտների առկայություն.

6.Գյուղում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների առկայություն.

7.Գործող եկեղեցի.

8. Համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապ և փոխհամաձայնեցում

9.Համայնքի ղեկավարի երկարամյա փորձ և ազգաբնակչության վստահություն:

10.Քարի վերամշակման ձեռնարկության առկայությունը

Թույլ կողմերը

1.Աշխատատեղերի բացակայություն
2.Ոռոգման ջրի առկայությունը 40%
3. Փոքր հողակտորների առկայությունը
4. Արոտներում ճանապարհների, ջրաղբյուրների, կացարանների , էլ. հոսանքի բացակայությունը
5.Արդյունաբերական հանգույցների չաշխատելու պատճառով գործազրկության առկայություն.
6.Ազգաբնակչության անվճարունակություն, սոցիալ-տնտեսական պայմանների ծանր վիճակ.
7.Մանկապարտեզի և մշակույթի տան բացակայություն
8. Խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի ոչ բարվոք վիճակը.
9.Գյուղատնտեսության համար պիտանի հողերի սակավություն, հողերի կտրտվածություն.
10.Որոշ փողոցներում խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման անհրաժեշտություն
11.Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայություն
12.Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեք և իրացման դժվարություններ

Հնարավորությունները

1.Աշխատուժի առկայություն

2.Տուրիզմի զարգացման համար գեղատեսիլ տարածքի առկայություն , պատմական և մշակութային վայրերի առկայություն

3.Քարի և ավազի հանքավայրերի առկայություն

Սպառնալիքներ

1.Ցրտահարություն
2.Կարկուտ
3.Երկրաշարժեր
4.Բնակչության աճի ցածր տեմպ
5.Բնակչության արտագաղթ
6.Ուժեղ քամիներ

3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1Հ ի՞նչ տեսլական ունի համայնքը ապագա տարիների համար,

Ղուրսալի համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում ,որի արդյունքում համայնքում կգործեն ձեռնարկությունների մասնաճյուղեր՝ մասնավորապես գյուղ մթերքների վերամշակման,քարի վերամշակման,
2. Իրականացնել ծրագրեր ուղղված զբոսաշրջության զարգացմանը,որի ընթացքում նախատեսվում է համայնքում կառուցել հանգստյան գոտիներ, տնային տնտեսություններին կից հյուրանոցային տիպի շինությունների կառուցում,նոր առևտրի կետերի վերաբացում:
3. Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է զարկ տալ կոոպերատիվային շարժմանը, մեքենատրակտորային կենտրոնացված կայանի ստեղծում, ժամանակակից բարձր արտադրողական տեխնիկայի ձեռք բերում, մասնավորապես կոմբայն, վարի տրակտոր և այլ գյուղմեքենաներ և գործիքներ: Նախատեսվում է նաև վերականգնել ոռոգման ջրագծեր,որոնց արդյունքում ոռոգման ջրով անխափան կապահովվի 60-ից 70 հա ողատարածք: Նախատեսվում է նաև արոտներ տանող ճանապարհներ կառուցում, արոտատեղերում մակատեղերի, կացարանների և ծածկոցների կառուցում:
4. Համայնքի զարգացման ընթացքը իրատեսական և նպատակային լինելու համար անհրաժեշտ ենք համարում բնակչության բնական և արհեստական աճը: Գործարար միջավայրի բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը մեծ խթան կլինեն համայնքում ծնելիությանը և բազմազավակությանը, ինչպես նաև բնակչության ներհոսքին: Բազմազավակությանը և ծնելիությանը խթանելու համար նախատեսվում է նաև ֆինանսական օգնության իրականացում, նորաստեղծ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տամադրում:
5. Համանքի ճանապարհների և ենթակառույցների մասով նախատեսվում է որոշ փողոցների ասֆալտապատում /2000-ից 3000քառմ/ , որոշ մասի շեբենապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում:
6. Երիտասարդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միոցառումների կազմակերպում ,ժամանցի կենտրոնների ստեղծում, մարզական և մշակութային խմբակների ստեղծում:

7. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադելու աշխատանքներ: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում՝ հասարակական և արտադրական կառույցների համար,ինչպես նաև առևտրի կետերի, հանգստյան գոտիների կառուցման համար:
8. Համանքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, շենքերի և շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ, փողոցների լուսավորման և մաքրման աշխատանքներ:
9. Համանքում բնակարանային շինարարության խթանման բնագավառում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տրամադրում, ցածր տոկոսներով երկարատև վարկերի տրամադրում , օժանդակություն փաստաթղթային, իրավական հարցերում և բարոյական աջակցություն:
10. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների , սպորտլանդիաների անցկացում, սպորտային առանձին խմբակների ստեղծում,միջհամայնքային մրցումների անցկացում:
11. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման համար նախատեսվում է բուժկետի շենքի ձեռք բերում,սարքավորումներով և գույքով ապահովում, ծրագրային կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում և համայնքի բնակչության առողջության պարբերական ստուգման աշխատանքներ բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից:
12. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ մանկա-պարտեզի շենքի կառուցման աշխատանքներ, նոր գույքի և սարքավորումների ձեռք բերում ,մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում և պայմանների բարելավում:
13. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսում է՝դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկում:
14. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում,զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
15. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված ,սական սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին: Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /անասունների տեսքով, գույքի, հագուստի, սննդի տեսքով և այլն/:

16. Հաշմանդամներին հասարակական կյանքին մասնակցության խթանման բնագավառում նախատեսվում է համագործակցություն ,,Օրրան,, կազմակերպության հետ, հաշանդամների ընդգրկել զանազան հանձնաժողովների և խմբերի մեջ: Ստեղծել պայմաններ նրան ազատ տեղաշարժի համար /սայլուղիներ կառուցում և այլն:
17. Բարեգործության խթանաման բանագավառում նախատեսվում է արտերկրներում բնակվող մեր հայրենակիցներին պարպերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին ,խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ: Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ, ստեղծել բարեգործների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը, իրականացվող ծրագիրը նպատակ ունի համայնքային գույքի՝ հանդիսությունների սրահի կառուցումը, փողոցային լուսավորության բարելավում և ոռոգման ջրագծի ամբողջական կառուցումը:

2.Ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումները դիտված են երիտասարդության ակտիվացմանը, վերանորոգված խաղասենյակի կառուցումը կնպաստի գիտելիքների ավելացմանը , հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքային մտածողության բարձրացմանը:

3. Համայնքի ճանապարհների պահպանման և շահագործման ծրագրերի արդյունքում կունենանք 300 քառ.մետր ասֆալտապատ փողոց , 3000 քառ.մետր բարեկարգ շեբենապատված ճանապարհ,1000 մ. վերանորոգված ջրհեռացման առու, մաքուր և գրավիչ համայնք ՝ բնակվողների և զբոսաշրջիկների համար:

4.Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. Պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:

5.Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն գյուղ մթերքների առատության, իրացման շուկայում մրցունակության բարձրացման , բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ հնգամյակի ընթացքում 10-ից մինչև 50 %:

6.Զբոսաշրջության ծրագրերի նպատակն է բնակիչների սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավումը՝ նախատեսվում է եկամուտ ստացող տնային տնտեսությունների աճ 15-ից 60 տոկոսի չափով :

7. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում 20-ից 60 կետով , ժամանակակից ենթակառույցներով և շինություններով մաքուր՝ աղբահարթակներով և աղբամաններով կահավորված համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից:

4.Համայնքի զարգացման ծրագրի ֆինանսավորումը

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1.ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ –իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

2.ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ -իրականացվում է է համայնքի բյուջեի միջոցներով

3. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվում է է համայնքի բյուջեի միջոցներով:

5. ՀՀՋԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագիրի նպատակամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

ՂՈՒՐՍԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ